Մրցույթի հայտարարություն
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նոր Գեղիի N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նոր Գեղիի N1 միջնակարգ դպրոց » պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի « Նոր Գեղիի N1 միջնակարգ դպրոց » պետական ոչ առևտրային կազմակերպությանում

2021 թվականի հոկտեմբերի 18 -ից մինչև նոյեմբերի 5 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9°° -ից մինչև ժամը 15°° -ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա *2021 թվականի նոյեմբերի 19-ին*՝ ժամը 14°°-ին, Նոր Գեղիի N1 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, Ց.Խաչատրյան 4:

Տեղեկությունների համար զանգահարել
հեռախոսահամար՝ 093 37 81 21, mariam.dannielle@gmail.com

(խորհրդի կողմից լիազորված անդամի հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն):